ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ ԽՄԲԱԳՅՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ՊԱՐՈՆ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ներսիսյան.

Ի պատասխան Ձեր 10.02.2020թ. հ.069 գրության՝ տեղեկացվում է.

«Հուսալի Կամար» ՍՊԸ-ի կողմից 21.08.2019թ. տրված եզրակացության համաձայն՝ Էրեբունի վարչական շրջանի Վարդաշեն հ.6 փողոցի հ.66/1 հասցեում գտնվող հանրակացարանային շենքի տեխնիկական վիճակը գնահատվել է 3-րդ աստիճանի վնասվածության:

Երևանի քաղաքապետարանում Վարդաշեն հ.6 փողոցի հ.66/1 հասցեում գտնվող շենքի 4-րդ կարգի վթարային լինելու վերաբերյալ տեղեկատվություն առկա չէ: Գործող օրենսդրությամբ Երևանի քաղաքապետարանի կողմից վերաբնակեցվում են Երևան քաղաքում առկա քանդման ենթակա 4-րդ կարգի վթարային բազմաբնակարան և հանրակացարանային շենքերի բնակիչները: Նշված գործընթացն իրականացվում է ՀՀ կառավարության 2009 թվականի փետրվարի 5-ի հ.172-Ն, 2000 թվականի հոկտեմբերի 25-ի հ.682 որոշումների և Երևան քաղաքի ավագանու կողմից համապատասխան տարվա համար ընդունված՝ Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման ծրագրի հիման վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ